

**ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Պայմանագիր N ՄՄՏՀ – ԳՀԾՁԲ-22/15

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Հայիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում



ԳԻՐԲ 1.

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

«ՄՈՂՈՒԼ» ՍՊԸ



ԵՐԵՎԱՆ - 2022 թ



Օրագրի անվանումը.

Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում

Հաստորի անվանում:

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Կազմում, վերանայում և հաստատում

Կազմեց	Ա. Օհանյան	Ստորագրություն	
Պաշտոն	Նախագծող	Անսաթիվ	
Ստուգեց	Ա. Հովհաննիսյան	Ստորագրություն	
Պաշտոն	Նախագծի գլխավոր ճարտարագետ	Անսաթիվ	

Բաշխման ցանկ

Կազմակերպություն	Տրամադրման ամսաթիվ	Օրինակների թիվը	
Տաթևի համայնքապետարան			
ՎՀ	Առաջին թողարկում:		
Բնիքս	Փոփոխություններ	Անսաթիվ	Ստորագրություն

Նախագծի կազմը

- Գիրք 1* *Բացատրագիր*
- Գիրք 2* *Գծագրական մաս*
- Գիրք 3* *Աշխատանքային ծավալներ*
- Գիրք 4* *Նախահաշիվներ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ❖ Ներածություն
- ❖ Մարզի համառոտ նկարագիր
- ❖ Բացատրական մաս
- ❖ Ինժեներա-երկրաբանական պայմաններ
- ❖ Ընդհանուր դրույթներ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախագիծն իրականացվել է Տաթևի համայնքապետարանի պատվերով՝ պայմանագիր Պայմանագիր N ՄՄՏՀ – ԳՀԾՁԲ-22/15, որն իր մեջ ներառում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների մատուցում / Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում/ աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ):

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 4 գրքեր՝

- | | |
|--------|-----------------------|
| Գիրք 1 | Բացատրագիր |
| Գիրք 2 | Աշխատանքային գծագրեր |
| Գիրք 3 | Աշխատանքային ծավալներ |
| Գիրք 4 | Նախահաշիվներ |

2. ՄԱՐԶԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Հալիձոր գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում:
 Բնակավայրն ունի բազմադարյա պատմություն և հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Իր աշխարհագրական դիրքով գտնվում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ամենահայտնի ուղղություններից մեկի՝ Տաթևեր ճոպանուղի-Տաթևի վանք երթուղու վրա: Հանդիսանում է աշխարհի ամենաերկար ճոպանուղու առաջին մեկնարկային կետը:

Ունի գեղեցիկ բնություն, որն արտահայտվում է անդնդախոր ձորերով, ժայռապատ և անտառապատ լեռնալանջերով, որոնց ստորոտով հոսում է արագահոս Որոտան գետը:

Հալիձոր անունը ծագել է Հաբանդ գավառի Հալե, Հալիս կոչվող բնակավայրերի անվանումներից:



Աշխարհագրորեն Հալիձորը գտնվում է Որոտան գետի ձախ ափի մոտ՝ ծովի մակարդակից 1300-1350 մ բարձրության վրա: Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապան քաղաքից հեռու է 62 կմ: Մոտակա քաղաքը Գորիսն է, որից հեռու է 12 կմ դեպի հարավ-արևմուտք:

Հալիձորից հյուսիս-արևելք գտնվում է Շինուհայր գյուղը, հարավում և արևելքում՝ Որոտան գետի կիրճը, արևելքում և հյուսիս-արևելքում՝ մշակովի դաշտեր են:

Հալիձոր բնակավայրով է անցնում հանրապետական նշանակության Հ 45 ավտոճանապարհը:

Հայաստանի Հանրապետության անկախության սկզբի տարիներին Հալիձորը ընդգրկված է եղել Գորիսի շրջանի կազմում, իսկ 1995 թվականից Սյունիքի մարզում, որի մաս է կազմում

նախկին Գորիսի շրջանը: 2015 թվականից բնակավայրը ներառվել է Սյունիքի մարզի Տաթև խոշորացված համայնքի մեջ:

Ըստ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի կատարած մարդահամարի արդյունքների գյուղի բնակչությունը կազմել է 551 մարդ[1]:

Հալիձորի ազգաբնակչության փոփոխությունը.[2]

Տարի	1831	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2004	2011
Բնակիչ	58	584	615	657	577	518	482	509	602	625	551

Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ:

3. ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

ԱՆ-ի շրջանականերում իրականացված հետազոտությունների, ուսումնասիրությունների, վերլուծությունների և հիմնավորված տեխնիկական առաջարկությունների համար հիմք են հանդիսացել Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական և ճարտարապետա-հատակագծային առաջադրանքները, բնակավայր կատարված այցելությունները և տեղում կատարված ուսումնասիրությունները:



ԱՆ-ի հիմնական նպատակը ՀՀ գործող նորմերին համապատասխան սպառողներին անհրաժեշտ որակով և քանակով ջրամատակարարման ապահովումն է:

Բացատրական մասում ներկայացված են հետևյալ աշխատանքները՝

- Կատարված աշխատանքերի նկարագրություն
- Հիդրավլիկ հաշվարկ

3.1 Կատարված աշխատանքների նկարագրություն

Համաձայն առաջադրանքի նախատեսվում է իրականացնել Շինուհայր գյուղի վերնի մասում գտնվող ջրընդունիչ ավազանի կառուցում, այնտեղից M-1 մագիստրալ խողովակով տեղափոխում մինչև Հալիձոր գյուղ, որից սնվելու է նոր նախագծվող ոռոգման ցանցը: M-1 մագիստրալ խողովակաշարն ունի 3125մ երկարություն: Նախատեսված է

ՆԿ 0+00 – ՆԿ 4+20 de 200 PN1.0ՄՊա,

ՆԿ 4+20 – ՆԿ 6+60 de 200 PN1.25ՄՊա,

ՆԿ 6+60 – ՆԿ 19+40 de 200 PN1.0ՄՊա,

ՆԿ 19+40 – ՆԿ 21+00 de 180 PN1.0ՄՊա պոլիէթիլենե խողովակներով,

ՆԿ 21+00 – ՆԿ 25+20 DN159 x5, վերգետնյա տեղադրումով

ՆԿ 25+20 – ՆԿ 30+87 de DN219 x5 պողպատե խողովակներով:

M-1 մագիստրալ խողովակաշարը կահավորված է ՓՀ-1 ՆԿ 19+20, ՓՀ-2 ՆԿ 28+30, ՓՀ-3 ՆԿ 28+80, ՓՀ-4 ՆԿ 29+30, ՓՀ-5 ՆԿ 30+80 հորերով, օդահան հանգույցներով ՆԿ 21+05 և ՆԿ 27+80, ԴՀ-1 ՆԿ 13+20, ՃԿՀ-1 ՆԿ 25+20:

Ճնշման կարգավորիչի պարամետրերը պետք է ընտրվեն համապատասխան հիդրավլիկական հաշվարկային կտրվածքի:

Մագիստրալի վրա նախատեսված է խարիսխային հենարան ՆԿ 21+00 հատվածում և միջանկյալ հենարան ` 10մ քայլով, պոլիէթիլենե անցում ` de200x180:

Ճանապարհի հետ հատման հատվածում նախատեսված է պողպատե պատյան խողովակ DN 325x6 (St): Մագիստրալի ստորգետնյա հատվածներում պաշտպանիչ շերտի վրա նախատեսված է մետաղական լարով ազդանշանային ցանցավոր ժապավեն:

Մագիստրալի թեք հատվածում (ՆԿ21+00-25+20) շինարարական աշխատանքների կազմակերպման մեթոդի ընտրությունը իրականացնում է Կապալառուն ` ապահովելով շին աշխատանքների անվտանգությունը համապատասխան ՇՆԿ III-4-80*, իսկ դրանից բխող ծախսերը անհրաժեշտ է ներառել տվյալ աշխատանքի միավոր գնի մեջ:

M-1 մագիստրալից սկիզբ են առնում W-1, W-2, W-3, W-4, W-5, W-6 ճյուղերը:

W-1 ճյուղն de 110 PN1.0ՄՊա ` L=250մ երկարություն, de 90 PN1.0ՄՊա L=155մ:

W-2 ճյուղն de 110 PN1.0ՄՊա ` L=510մ երկարություն, de 75 PN1.25ՄՊա ունի L=200մ

երկարություն:

W-3 ճյուղն de 110 PN1.0ՄՊա ունի L=570մ երկարություն: W-3 ճյուղից սնվում է W-3-1 ենթաճյուղը:

W-3-1 ենթաճյուղն de 75 PN1.0ՄՊա ունի L=250մ երկարություն:

W-4 ճյուղն de 110 PN1.0ՄՊա `L=200մ երկարություն, de 90 PN1.0ՄՊա ունի L=230մ երկարություն:

W-5 ճյուղն de 110 PN1.0ՄՊա `L=255մ երկարություն, de 75 PN1.25ՄՊա ունի L=275մ երկարություն:

W-6 ճյուղն de 110 PN1.0ՄՊա `L=175մ երկարություն, de 75 PN1.0ՄՊա ունի L=40մ երկարություն: W-6 ճյուղից սնվում են W-6-1, W-6-2, W-6-3, ենթաճյուղերը:

W-6-1 ենթաճյուղն de 75 PN1.0ՄՊա ունի L=225մ երկարություն,

W-6-2 ենթաճյուղն de 90PN1.0ՄՊա ունի L=265մ երկարություն,

W-6-3 ենթաճյուղն de 75 PN1.25ՄՊա ունի L=195մ երկարություն:

Նախագծվող խողովակների ցուցանիշները ամփոփ ներկայացված են ստորև տեղադրված աղյուսակում:

Ջրատարների ցուցանիշները


N	Ջրատար	L, մ	ГОСТ 10704-91		PN 1.25 ՄՊա			PN 1.0 ՄՊա					
			DN150	DN200	de200	de75	de63	de200	de180	de110	de90	de75	de63
2	M-1	3125	440	575	240			1710	160				
3	W-1	405								250	155		
4	W-2	710				200				510			
	W-3	570								570			
5	W-3-1	250										250	
6	W-4	430								200	230		
	W-5	530				275				255			
7	W-6	215								175		40	
8	W-6-1	225										225	
9	W-6-2	265									265		
10	W-6-3	195				195							
11	Մասնավորներ	150					20						130
	Ընդհանուր	7070	440	575	240	670	20	1710	160	1960	650	515	130

W-1, W-2, W-3, W-3-1, W-4, W-5, W-6, W-6-1, W-6-2, W-6-3 ճյուղերի վերջում նախատեսված են դատարկման փականներ: Փողոցների հետ հասման հատվածներում նախատեսված են պատյան խողովակներ:

Համաձայն Համայնքապետարանի տրամադրած 09 հունիսի 2022 թ. N552 տեղեկանքի, սեփականաշնորհված հողամասով անցնող խողովակաշարի հողի տակ անցնելու խրամուղու քանդման և ծածկման աշխատանքները ներառված չեն աշխատանքային նախագծի ծավալներում:

Խողովակի հատակը տեղադրվում է 100մմ հաստությամբ ավազե նախապատրաստական շերտի վրա: Պաշտպանիչ շերտը նունպես պետք է իրականացնել ավազով, ապահովելով խողովակի վերին պատի վրա ոչ պակաս քան 200մմ հաստություն: Խրամուղին ունի 0.7մ հատակի լայնությամբ սեղանաձև կտրվածք՝ $m=0.25$ շեղի թեքությամբ:

Աշխատանքային ծավալները հաշվարկված են խրամուղու տիպային կտրվածքով:



Անհատական միացումները հատակագծի վրա ցույց չեն տրված, քանի որ դրանք տեղադրվում են շինարարության ընթացքում՝ բաժանորդի հետ համաձայնեցման արդյունքում:

Աշխատանքային նախագիծը մշակվել է ՀՀ-ում գրծող նորմերին և կանոններին համապատասխան: Հիմնական մոտեցումները բանավոր քննարկվել և համաձայնեցվել են Պատվիրատուի հետ

M-1 Մագիստրալի հիդրավլիկ հաշվարկ


Q=60լ

Սկիզբ անող ջրագծեր	№	Խողովակի տեսակը	ՆԿ _{սկ}	ՆԿ _{վերջ}	L մ	D մմ	Պատի հաստ. ծ մմ	Աշխ. պայման P ՄՊա	Q լ/վ	V մ/վ	h _w մ	Σh _w մ	Խող. Նիշ Δ մ	H _{ստ} մ	H _{աղ} մ	Կարմիր նիշ տարբ.	Ճնշման կարգավորիչ
		Պոլիէթ.	0+00	4+20	430	200		1.0 ՄՊա	60.0	2.453	13.36	13.357	1516	89	75.643	89.00	
		Պոլիէթ.	4+20	6+60	240	200		1.6 ՄՊա	60.0	2.853	10.69	24.047	1516	89	64.953	0.00	
Փշ-1	Ճուպս	Պոլիէթ.	6+60	19+40	1280	200		1.0 ՄՊա	60.0	2.453	39.76	63.807	1527	78	14.193	-11.00	
		Պոլիէթ.	19+40	21+00	160	180		1.0 ՄՊա	60.0	3.029	8.22	72.026	1517	88	15.974	10.00	
		Մետաղ	21+00	25+20	440	159	5		60.0	3.441	68.07	140.093	1390	50	50.000	127.00	50
Փշ-2	W-1	Մետաղ	25+20	28+30	310	219	5		60.0	1.749	8.54	148.631	1408	32	23.462	-18.00	
	W-2	Մետաղ	28+30	28+30	0	219	5		60.0	1.749	0.00	148.631	1408	32	23.462	0.00	
Փշ-3	W-3	Մետաղ	28+30	28+80	50	219	5		60.0	1.749	1.38	150.008	1384	56	46.085	24.00	
Փշ-4	W-4	Մետաղ	28+80	29+20	40	219	5		60.0	1.749	1.10	151.109	1378	62	50.983	6.00	
Փշ-5	W-5	Մետաղ	29+20	30+87	175	219	5		60.0	1.749	4.82	155.929	1366	74	58.164	12.00	
	W-6	Մետաղ	30+87	30+87	0	219	5		60.0	1.749	0.00	155.929	1366	74	58.164	0.00	

Q=30լ

Սկիզբ անող ջրագծեր	№	Խողովակի տեսակը	ՆԿ _{սկ}	ՆԿ _{վերջ}	L մ	D մմ	Պատի հաստ. ծ մմ	Աշխ. պայման P ՄՊա	Q լ/վ	V մ/վ	h _w մ	Σh _w մ	Խող. Նիշ Δ մ	H _{ստ} մ	H _{աղ} մ	Կարմիր նիշ տարբ.	Ճնշման կարգավորիչ
		Պոլիէթ.	0+00	4+20	430	200		1.0 ՄՊա	30.0	1.227	3.91	3.905	1516	89	85.095	89.00	
		Պոլիէթ.	4+20	6+60	240	200		1.6 ՄՊա	30.0	1.426	3.13	7.031	1516	89	81.969	0.00	
Փշ-1	Ճուպս	Պոլիէթ.	6+60	19+40	1280	200		1.0 ՄՊա	30.0	1.227	11.63	18.657	1527	78	59.343	-11.00	
		Պոլիէթ.	19+40	21+00	160	180		1.0 ՄՊա	30.0	1.514	2.40	21.060	1517	88	66.940	10.00	
		Մետաղ	21+00	25+20	440	159	5		30.0	1.721	18.24	39.298	1390	50	50.000	127.00	50
Փշ-2	W-1	Մետաղ	25+20	28+30	310	219	5		30.0	0.874	2.29	41.586	1408	32	29.712	-18.00	
	W-2	Մետաղ	28+30	28+30	0	219	5		30.0	0.874	0.00	41.586	1408	32	29.712	0.00	
Փշ-3	W-3	Մետաղ	28+30	28+80	50	219	5		30.0	0.874	0.37	41.955	1384	56	53.343	24.00	
Փշ-4	W-4	Մետաղ	28+80	29+20	40	219	5		30.0	0.874	0.30	42.250	1378	62	59.048	6.00	
Փշ-5	W-5	Մետաղ	29+20	30+87	175	219	5		30.0	0.874	1.29	43.541	1366	74	69.757	12.00	
	W-6	Մետաղ	30+87	30+87	0	219	5		30.0	0.874	0.00	43.541	1366	74	69.757	0.00	

ՄՈՏԵՑՆՈՂ ՋՐԱՏԱՐԻ ՀԻՂՐԱՎԼԻԿ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔ



Փիք 1. Բացատրագիր

4. ԻՆՏԵՆՏԻՎ-ԵՐԿՐԱՐՄԱՆ ԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայն առաջադրանքի 2022թվականի մայիս-հունիս ամիսներին կատարվել է ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի ռոտոման հակարգի բարելավման համար: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում:

Շրջանի կլիման բնութագրվում է մեղմ ու կարճատև ձմեռով և շոգ ամառով: Տարեկան միջին օդի ջերմաստիճանը ըստ Գորիսի օդերևույթաբանական կայանի 8.8°C է, բացարձակ նվազագույնը՝ -20°C է, առավելագույնը՝ 35°C : Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է, ամենատաքը՝ հուլիսը: Տարեկան միջին օդի հարաբերական խոնավությունը 72%: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 748մմ է: Տարեկան կտրվածքով հիմնական տեղումները լինում են մարտ-հունիս ամիսներին: Գրունտի սառչման առավելագույն խորությունը 36սմ է: Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են վերին պլիոցենի հասակի ապարները, որոնք ներկայացված են դոլերիտային և օլիվինային բազալտներով, անդեզիտային բազալտներով, անդեզիտներով, անդեզիտո-դագիտներով և տուֆոբեկչաններով: Այս ապարները ուսումնասիրվող տարածքում ծածկված են ավազակավերով, բեկորա-խճաքարերով և հրաբխային խարամներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը կախված երկրաբանական կտրվածքից և ռելիեֆից համարվում է լավ ինֆիլտրացիոն գոտի: Մթնոլորտային տեղումների հիմնական մասը ներծծվելով մայր ապարների մեջ, բեռնաթափվում են Որոտան գետի կիրճում, իսկ մնացած մասը ունի մակերեսային հոսք դեպի գետ: Ստորերկրյա ջրերի մակարդակը գտնվում է 100մ-ից խորը: Ֆիզիկա-երկրաբանական երևույթները արտահայտված են մայր ապարների հողմնահարմամբ:

Համաձայն առաջադրանքի նախատեսվում է իրականացնել Շինուհայր գյուղի վերնի մասում կառուցված ջրավազանի վերակառուցում և այտեղից փակ խողովակներով ջրի տեղափոխում մինչև Հալիձոր գյուղ և միացում նոր նախագծվող վերգետնյա ցանցին: Ուսումնասիրվող ջրագծերի ուղեգծերի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնդիտական եղանակով՝ բնական մերկացումների, արխիվային նյութերի և շահագործողների տված տվյալների հիման վրա: Դաշտային և կամերալ աշխատանքների արդյունքների հիման վրա ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների հինգ շերտեր: Ստորև բերվում է

այդ շերտերի լիթոլոգիական կտրվածքները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

- Շերտ N^o1 *Բուսահող խճաքարերի առկայությամբ, հզորությունը 0.1մ, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-9^վ*
- Շերտ N^o2 *Ավազակավեր, շականակագույն գույնի խճաքարերի խառնուրդներով մինչև 25%, հզորությունը 1.0-1.5մ, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-33^բ*
Տեսակարար կշիռը -2.70-2.2.72գ/սմ³
Ծավալային կշիռը – 1.72-1.75գ/սմ³
Ներքին շփման անկյունը – 17-18^o
Շաղկապման ուժը – 0.36-0.41 կգ/սմ²
Դեֆորմացիայի մոդուլը – 95-105 կգ/սմ²
- Շերտ N^o3 *Բեկորա-խճաքարեր, ավազների լցուկով մինչև 15-20%, հզորությունը 1.2-1.7մ, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-12*
Տեսակարար կշիռը -2.71-2.73 գ/սմ³
Ծավալային կշիռը – 2.05-2.12գ/սմ³
Ներքին շփման անկյունը – 38-40^o
Դեֆորմացիայի մոդուլը – 300-350 կգ/սմ²
- Շերտ N^o4 *Հրաբխային շալամներ (խճաքարերի տեսով) հզորությունը 2.5մ-ից ավելի, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ1-12*
Տեսակարար կշիռը -2.68-2.70գ/սմ³
Ծավալային կշիռը – 1.95-2.05 գ/սմ³
Ներքին շփման անկյունը – 34-36^o
Դեֆորմացիայի մոդուլը – 180-200 կգ/սմ²

Շերտ №5 Անդեզիտային բազալտներ, խոշոր բեկորների տեսով մինչև 10-15%, խճաքարերի լցուկով, հզորությունը 3.0մ-ից ավելի, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-19
Տեսակարար կշիռը -2.72-2.73 գ/սմ³
Ծավալային կշիռը – 2.1-2.3գ/սմ³
Ներքին շփման անկյունը – 45-50°
Դեֆորմացիայի մոդուլը – 500-330 600կգ/սմ²

Ամփոփելով դաշտային և կամերալ աշխատանքների արդյունքները կարելի է ասել, որ ուսումնասիրվող տարածքի երկրաբանական պայմանները բավարար են շինարարության համար: Ստորերկրյա ջրերի մակարդակը գտնվում է 100մ-ից խորը: Ֆիզիկա-երկրաբանական երևույթները արտահայտված են մայր ապարների հողմնահարմամբ: Սեյսմիկ գոտիականության տեսակետից ուսումնասիրվող տարածքը մտնում է I գոտու մեջ, սեյսմիկականությունը VIII բալ: Ստորև բերվում է ջրագծի ուղեգծի լիթոլոգիական կտրվածքը ըստ նշակետերի:

Մագիստրալ խողովակաշար

ՆԿ 0+00-ՆԿ 1+90

- 0.0-0.1մ Բուսահող խճաքարերի առկայությամբ, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-9Վ
- 0.1-1.5մ Բեկորա-խճաքարեր, ավազների լցուկով մինչև 20%, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-12
- 1.5-2.5մ Հրաբխիային խարամներ, խճաքարեր՝ բեկորների տեսքով, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-ժ-1-12

ՆԿ 1+90-ՆԿ 4+90

- 0.0-0.1մ Բուսահող, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-9Վ
- 0.1-2.5մ Բեկորա-խճաքարեր, ավազակավերի լցուկով մինչև 25%, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-12

ՆԿ 4+90-ՆԿ 20+10

- 0.0-0.1մ *Բուսահող, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-Ժ1-9վ*
- 0.1-1.2մ *Ավազակավեր խճաքարերի խառնուրդներով մինչև 30%, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-Ժ-1-33^ա*
- 1.2-2.5 *Բրբեկորա-խճաքարեր, ավազակավերի լցուկով մինչև 20%, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-Ժ-1-12*

ՆԿ 20+10-ՆԿ 30+87

- 0.0-2.5մ *և ավելի անդեզիտային բազալտներ խոշոր բեկորների տեսքով, մինչև 10-15% խճաքարերի լցուկով, %, գրունտի մշակման խումբը ըստ ՇՆև Կ IV-2-82-Ժ-1-19*

5.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 16934

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՏՏԱԹԻՅԵՐԻ ԻՆՏԵՆՏՐԱԿԱՆ ԴԱՐՄՆԵՐԻ ՄԵՍԿԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆ ԿՈՒԹՅՈՒՆ ԶՊԱՀԱՆՋՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(գործունեության տեսակը)

Տրված է «01 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թ.» «ՄՈՂՈՒԼ» ՍՊԸ ԱՐԱԳԱԾՈՏՆ, ԱՇՏԱՐԱԿ, ԵՐԵՎԱՆՅԱՆ Փ., 2


(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆՃԱՄԿԵՏ**

**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

(Ստորագրություն)
Կ.Տ.

Ա. ՂՈՒԱՐՅԱՆ
(անուն, ազգանուն)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Յ Ի Ն Ե Ր Դ Ի Ր

N 16934 - 2

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՄՈՂՈՒԼ » ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԿԻԿՏՈՐՅԱ ԹԱԴԵԿՈՍԻ ԱԿԱԳՅԱՆ 003236114

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈԹԵՐԻ՝

ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՇԵՈՎՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության ոլորտը)

01. 02. 2019թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝

ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ


ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՐ՝


(ստորագրությունը)

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Յ Ի Ն Ե Ր Դ Ի Ր

N 16934 - 6

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՍՈՂՈՒԼ » ՍՊԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԱԼՖՐԵԴԻ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ AG0384097

(կազմակերպության անվանումը և ճասնագետի անձնագրային տվյալները)

ԿԻԿՏՈՐՅԱ ԹԱՂԵԿՈՍԻ ԱԿԱԳՅԱՆ 003236114 ՀԱՅՄԵՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ AM0378610

(կազմակերպության անվանումը և ճասնագետի անձնագրային տվյալները)

ՀԻՂՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՀԻՂՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

(գործունեության ոլորտը)

01. 02. 2019թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝

ԱՆԺԱՄԿԵՏ


ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅ՝


(ստորագրությունը)

Ա. ՂՈՒՆԱՐՅԱՆ

(ամուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐՂԻՐ

N 16934 - 7

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՄՈՂՈՒԼ » ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՀԱՅՍԵՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ AM0378610

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՀԻՂՈՍԵՆՆԻԿԱԿԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՀԻՂՈՍԵԼԻՈՐԱՑԻԱ

(գործունեության ոլորտը)

01. 02. 2019թ.

(տալու ամսաթիվը)


ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝

ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅ՝

1


(ստորագրությունը)



Ա. ՂՈՒԼՈՐՅԱՆ

(ամուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Սյունիքի մարզ, Տաթև համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

N 07 « 30 » մարտի 2022թ.

Օրյելտ՝ Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում
(օրյելտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Միջինից բարձր ռիսկայնության աստիճան, 3-րդ կատեգորիա, 1/մեկ/ փուլ աշխատանքային նախագիծ նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(հակիրճ բնորոշումը, հզորությունը ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գյուղ Հալիձոր,
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող՝ Տաթևի համայնքապետարան
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ Տաթևի համայնքապետարանի կողմից տրված հայտ
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը՝ ըստ առաջադրանքի
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Բնակավայրերի բնակելի և հասարակական կառուցապատման գոտիներում
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

Առկա չէ

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Հանրապետական, միջհամայնքային և ներքնակավայրային նշանակության ճանապարհներ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Նախագծվող տարածքում առկա է ինժեներական ենթակառուցվածքների տեղադիրքը և ազդեցությունը, որը կհստակեցվի մանրամասն նախագծման ընթացքում

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Հանրապետական, միջհամայնքային և ներքնակավայրային նշանակության ճանապարհներ, մասնավոր բնակելի տներ և հողամասեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾՍՅՒՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Համաձայն քաղաքաշինական նորմերի

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)



9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

-

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Առկա չէ

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

-

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

-

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

-

9.7. այլ պահանջներ

-

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

-

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

-


12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում



(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) զագամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

Համաձայն Տաթևի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Համաձայն գործող նորմերի պահանջների

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Համաձայն նախագծի

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Համաձայն նախագծի

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Համաձայն գործող նորմերի պահանջների

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Չկան

19. Շրջակա միջավայրի պահպանում

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Համաձայն քաղաքաշինական նորմերի

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության

ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Համաձայն առաջադրանքի

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)



ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Պարզ փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Տաթևի համայնքապետարան

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Տաթևի համայնքապետարան

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. Մանուկյան

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)



22/05/31-03

31 / 05 / 2022

ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի
համայնքապետարանի
ղեկավար՝ պրն. Ս. Լալայան

Հարգելի պարոն Լալայան

«Տաթևի համայնքապետարան»-ի պատվերով «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից իրականացվում է «Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություններ» աշխատանքային նախագիծը:

Մրցութային փաստաթղթերի մշակման և աշխատանքային ծավալների գնահատման համար խնդրում ենք տրամադրել տվյալներ շինարարության ընթացքում առաջացող ավելցուկային բնահողի և շինարարական աղբի տեղափոխման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, փափուկ բնահողի բերման տարածքների հեռավորությունները համայնքից:

Հարգանքով՝
«Մոդուլ» ՍՊԸ տնօրեն՝



Ն. Հակոբյան

22/05/31-02

31 / 05 / 2022


ՀՀ Մյունիքի մարզի Տաթևի
համայնքապետարանի
ղեկավար՝ պրն. Ս. Լալայան

Հարգելի պարոն Լալայան

«Տաթևի համայնքապետարան»-ի պատվերով «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից իրականացվում է «Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություններ» աշխատանքային նախագիծը:

Մրցութային փաստաթղթերի մշակման համար խնդրում ենք տրամադրել տվյալներ ջրապատողների քանակի և ելքի մասին:

Հարգանքով՝
«Մոդուլ» ՍՊԸ տնօրեն՝



Ն. Հակոբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Տաթևի համայնք,
ՀՀ, Սյունիքի մարզ, Տաթևի համայնք, Հեռ. (0284)
95530, tatev.syuniq@mta.gov.am

N 551

09 հունիս 2022 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ «Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում» ծրագրի իրականացման ընթացքում առաջացած շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել «Մեշալկա» անվանյալ տարածքին հարակից տարածք, որը գտնվում է շինարարության իրականացման տեղանքներից 1.5-ից մինչև 4.5 կմ հեռավորության վրա:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ  Մարատ Գերասիմյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Տաթևի համայնք,
ՀՀ, Սյունիքի մարզ, Տաթևի համայնք, Հեռ. (0284)
95530, tatev.syunig@mta.gov.am

N 552

09 հունիս 2022 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ «Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում» ծրագրի շրջանակներում՝ Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի բնակչությունը հայտնում է իր պատրաստակամությունը, որ յուրաքնչուրը իր միջոցներով կկազմակերպի իր տնամերձ հողամասով անցնող խողովակաշարի հողի տակ անցկացնելու խրամուղու քանդման և ծածկման աշխատանքները: Ուստի առաջարկում ենք՝ նախագծով արտացոլված, տնամերձ հողամասերով անցնող խողովակաշարերի համապատասխան հատվածների հողի տակ անցկացման աշխատանքների ծավալները չներառել նախագծի մեջ:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ



Մարատ Գերասիմյան

«ՍՅՈՒՆԻՔ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ОБЩЕСТВО ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ «СЮНИК»

«SYUNIQ» WATER USERS ASSOCIATION

Հասցե՝ Սյունիքի մարզ, ք. Կապան, Շինարարների 1

Էլ. փոստ՝ syuniqwua@mail.ru

02 հունիս 2022թ.

N 100/22

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
Մ. ԳԵՐԱՍԻՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գերասիմյան,

Ի պատասխան 26.05.2022թ. N 313 գրության, տեղեկացնում ենք Ձեզ, որ Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի ոռոգման ջրի պաշարը բավարարելու նպատակով Ձեր կողմից նշված Շինուհայր բնակավայրի «Ավազաբլուր» կոչվող տարածքի համապատասխան կետում «Սյունիք» ՋՕԸ-ն կապահովի անհրաժեշտ 30 լ/վ ջրի պաշարը՝ ճնշման խողովակաշարը կարգավորելու դեպքում:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն՝



Ն. Հովհաննիսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր 3213,
Մայրուղի թիվ 14
Հեռ. (0284) 95530,
Էլ. փոստ tatev.syuniq@mta.gov.am

N 386
22 հունիս 2022թ.

«ՄՈՂՈՒԼ» ՍՊԸ-ի
ՏՆՕՐԵՆ
Ն. ՀԱԿՈՒՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան,

Ի լրումն «Սյունիք» ՋՕԸ 2022 թվականի հուլիսի 2-ի N 100/2 գրության, և քանի որ Շինուհայրի «Ավազաբլուր» կոչվող համապատասխան վայրում ոռոգման ջրի համապատասխան պաշարը ապահովելու նպատակով համայնքը պարտավորվում է կառուցել համապատասխան ճնշման խողովակաշար, ուստի հավաստիացնում ենք, որ համայնքի կողմից կառուցվելիք ճնշման խողովակաշարը թույլ կտա, որպեսզի նշված կետում ապահովվի 60 լ/վ ջրի պաշար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՄԱՐԶԻ ՓԵՐԱՍԻՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Շինուհայր 3213,
Մայրուղի թիվ 14
Հեռ. (0284) 95530,
Էլ. փոստ tatev.syuniq@mta.gov.am

N 385
22 հունիս 2022թ.

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ-ի
ՏՆՕՐԵՆ
Ն. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հալիձոր բնակավայրի համար ոռոգման ջրի ցանցի կառուցում» ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս անհրաժեշտ է Հալիձոր բնակավայրի շահառուների համար նախատեսել 150(մեկ հարյուր հիսուն) հատ արոնումենտ (ջրի ելքի ջրթողներ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝

ՄԱՐԿՍ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

